ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Հունան Տեր-Վարդանյանի, անդամներ Արա Զոհրաբյանի, Արմինե Ֆանյանի, Գառնիկ Թուխտարյանի, Տաթևիկ Դավթյանի, Արսեն Համբարձումյանի, Արթուր Պողոսյանի և Արտյոմ Սուջյանի,

նկատի ունենալով «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն առ այն, որ որակավորման քննություններն անցկացվում են ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023թ. գարնան-ամռան ընթացքում կազմակերպված և անցկացված որակավորման քննություններին «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց խմբերից մասնակցել են միայն 7-ը (դիմող 9 անձից մեկը չէր ներկայացել, իսկ երկրորդը՝ քննությանը գրանցվելուց հետո հեռացել էր), իսկ քննությունները հաղթահարել է միայն մեկ դիմորդ,

հաշվի առնելով նաև այն, որ յուրաքանչյուր կիսամյակում ՀՀ փաստաբանական ակադեմիան տալիս է 90-ից ավելի շրջանավարտներ, որոնք իրավունք ունեն մասնակցել որակավորման քննություններին,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգ»-ի 8-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով,

միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Սահմանել ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց որակավորման քննությունները կազմակերպել և անցկացնել տարին մեկ անգամ:

3. «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց որակավորման հաջորդ քննությունների ժամանակացույցի սահմանման հարցին անդրադառնալ 2024 թվականի գարնանը:

4. Սույն որոշումը և ժամանակացույցը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
նախագահ՝ Հունան Տեր-Վարդանյան

Որոշում N 9/1-L
ք. Երևան
17 հոկտեմբերի 2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
17.10.2023թ. N 9/1-Լ որոշման

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԱՎԱՐՏԱԾ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. 2023 թվականի երկրորդ կիսամյակի որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրները կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2023թ. հոկտեմբերի 18-ից** մինչև **2023թ. հոկտեմբերի 24-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին): Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 30-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով):
2. Ներկայացված փաստաթղթերի և տվյալների հավաստիության ստուգումը ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմակերպում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված 7 (յոթ) օրվա ընթացքում:
3. Որակավորման քննությունների **առաջին փուլն** անցկացվելու է **ք.Երևան, Զաքյան 7-3** հասցեում (ՀՀ փաստաբանական ակադեմիայի լսարաններում), իսկ **երկրորդ փուլը**՝ ՀՀ փաստաբանների պալատում (**ք.Երևան, Զաքյան 7-2** հասցեում):
4. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած **քաղաքացիաիրավական և վարչական ուղղվածության** ունկնդիրների որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է **02.11.2023թ. ժամը 09.00-ից:**
5. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած **քրեաիրավական ուղղվածության** ունկնդիրների որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է **03.11.2023թ. ժամը 09.00-ից:**
6. Առաջին փուլի քննությանը մասնակցելու համար հավակնորդները պետք է ներկայանան և գրանցվեն քննության օրը՝ ժամը **08^{00}-ից** մինչև **08^{45}**՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
7. Որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է **23.11.2023թ-ին** և **24.11.2023թ-ին, ժամը 09.00-ից սկսած:** Երկրորդ փուլին մասնակցելու համար հավակնորդը պետք է ներկայանա ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից էլեկտրոնային փոստով կամ այլ եղանակով ծանուցված օրը և ժամին՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Երկրորդ փուլին կարող է մասնակցել առաջին փուլը հաղթահարած հավակնորդը: